ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-փետրվար)





2024թ. հունվարին-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 312 մլրդ դրամ, ինչը 121.6 մլրդ դրամով կամ 28 %-ով պակաս է 2023թ. և 163.8 մլրդ դրամով կամ 110.5%-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 249.8 մլրդ դրամ, ինչը 13.6 մլրդ դրամով կամ 5.8 %-ով ավել է 2023թ. և 148.1 մլրդ դրամով կամ 145.6%-ով ավել է 2022 թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 62.2 մլրդ դրամ, ինչը 135.2 մլրդ դրամով կամ 68.5 %-ով պակաս է 2023թ. և 15.7 մլրդ դրամով կամ 33.8 %-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

2024թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 771.2 մլն դոլար, ինչը 328.8 մլն դոլարով կամ 29.9%-ով պակաս է 2023 թ. և 463.2 մլն դոլարով կամ 150.4 %-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 617.4 մլն դոլար, ինչը 19.7 մլն դոլարով կամ 3.3 %-ով ավել է 2023թ. և 405.9 մլն դոլարով կամ 191.9%-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 153.8 մլն դոլար, ինչը 348.5 մլն դոլարով կամ 69.4%-ով պակաս է 2023թ. և 57.3 մլն դոլարով կամ 59.4 %-ով պակաս է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**